ՄԵՐ ԳՈՐԾՆ ԱՐԺԵՔԱՍՏԵՂԾ Է.

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյան

-Պարո՛ն Մովսիսյան, ուրախ ենք Ձեզ հետ զրույցի համար:

Պարո՛ն Մովսիսյան, արդեն երկու տարի է՝ Արագածոտնի մարզի ղեկավարի պաշտոնում եք: Խոսենք Ձեր կառավարման նախորդ փուլի՝ անցած տարիների և աշխատանքային արդյունքների մասին:

-Ես ևս ուրախ եմ զրույցի համար: Իմ աշխատանքը գնահատողը, իհարկե, ժողովուրդն է, Արագածոտնի մարզի բնակիչն է, ում էլ մենք ծառայում ենք: Իմ աշխատանքի առանցքում եղել է և մնում է ժողովրդավարական, թիմային, փոխգործակցային մոտեցումը: Առանց թիմի, աշխատանքի ճիշտ բաժանման և համագործակցության, բնականաբար, շոշափելի արդյունքներ չէինք արձանագրի:

Նախորդ երկու տարում մենք Արագածոտնի մարզում զարգացման բազում ծրագրեր ենք կյանքի կոչել, նախ և առաջ՝ ՀՀ կառավարության բարձր հովանու ներքո՝ պետբյուջեի միջոցներով: Պետական ծրագրերի շրջանակում, մարզում նախորդ տարիներին մեկնարկել են ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված լայնածավալ միջոցառումներ՝ ճանապարհների, նոր դպրոցների կառուցումից մինչև բժշկական կենտրոնների կառուցում, որոնց ավարտը նախատեսվում է առաջիկայում: Սրանք ծրագրեր են, որոնք բերելու են բնակչության կենսամակարդակի շեշտակի աճ, կյանքի նոր որակ ու առաջընթաց:

Սուբվենցիոն ծրագրերով՝ կառավարություն-համայնք համաֆինանսավորմամբ ևս տարեցտարի տասնյակ զարգացման ծրագրեր ենք իրագործում, որոնք համայնքներին նոր շունչ են հաղորդում: Որպես մարզում կառավարության ներկայացուցիչ և մարզային իշխանություն, մենք ամուր կանգնած ենք նաև ներդրողների կողքին, որոնք ևս մարզին զարգացում են բերում:

Մեր նախաձեռնությամբ, անձամբ իմ որոշումներով իրականացված ծրագրերից կցանկանամ առանձնացնել նաև դպրոցաշինական ծրագրերը, որոնց շրջանակում ամեն տարի մի քանի տասնյակ դպրոցներում շինարարական աշխատանքներ ենք կատարում՝ վերանորոգելով դահլիճներ ու մարզադահլիճներ, միջանցքներ, դասասենյակներ, սանհանգույցներ, ներդնելով ջեռուցման ժամանակակից համակարգ և այլն:

Ծրագրերը շարունակական են և ամենամյա:

-Ամփոփեք, խնդրեմ, նախորդ տարին՝ ինչպիսի՞ն էր 2023 թվականը մարզի համար և այս տարվանից ի՞նչ ակնկալիքներ ունեք:

-2023 թվականն ամփոփել ենք գոհացնող արդյունքներով:

Մենք կառավարության և համայնքապետարանների հետ շարունակեցինք ապահովել Արագածոտնի մարզի զարգացման առաջանցիկ տեմպը: Կցանկանայի առանձնացնել 2023թ-ի. մեր աշխատանքի արդյունքներն արտահայտող մի քանի կետեր:

* Մարզում հիմնանորոգեցինք ընդհանուր 53 կմ 194 մ ճանապարհ:

* Մարզպետարանի ենթակայության դպրոցների բյուջեի խնայողությունների վերաբաշխումների միջոցով՝ 247 մլն 458 հազ դրամի ներդրմամբ իրականացրել ենք 105 ծրագիր՝ արդիականացնելով դպրոցների կրթական միջավայրը և մեր աշակերտներին նվիրելով հիմնանորոգված մարզադահլիճներ, հանդիսությունների սրահներ, լուծեցինք ջեռուցման ու տասնյակ այլ խնդիրներ:

* Ընդհանուր 30 մլն դրամի սոցիալական աջակցություն տրամադրեցինք մարզի բնակիչ 871 անձի:

* Կարողացանք ապահովել գյուղմթերքի արտադրության բարձր ցուցանիշներ:

* ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներից 4283-ին կամ 1082 ընտանիքի օժանդակեցինք Արագածոտնի մարզում մշտական բնակություն հաստատելու գործում:

* ԼՂ-ից բռնի տեղահանված 30 մանկավարժի աշխատանքի ընդունեցինք մարզի դպրոցներում, իսկ ընդհանուր առմամբ, ԼՂ-ից բռնի տեղահանված մեր 80 հայրենակցի աջակցեցինք աշխատանքի տեղավորման հարցում:

-2023 թվականին սուբվենցիոն ի՞նչ ծրագրեր են իրականացվել մարզում, ինչպիսի՞ ֆինանսավորմամբ և այժմ դրանք ի՞նչ փուլում են:

-2023 թվականին Արագածոտնի մարզում իրականացվել է 5 մլրդ 406 մլն դրամի սուբվենցիոն ծրագիր, որից 2 մլրդ 294 մլն դրամը ներդրվել է կառավարության կողմից, 3 մլրդ 105 մլն դրամը՝ համայնքների, 6 մլն դրամ էլ հատկացրել են այլ ներդրողներ:

Մարզի խոշորացված 8 համայնքներից 7-ը ընդգրկված են 2023թ.-ի սուբվենցիոն ծրագրերում: Ընդհանուր իրականացվել է 21 ծրագիր, որից այս պահի դրությամբ ավարտված են 15-ը, ավարտական փուլում են 3-ը, մյուս 3-ը նախագծային փուլում են:

Ըստ ոլորտների՝ նախորդ տարվա 21 ծրագրերի բաշխվածությունը հետևյալն է՝ ասֆալտապատում-5, գազիֆիկացում-4, սալարկում-4, ոռոգման ցանցի կառուցում/վերակառուցում-2, հասարակական շենքեր-2, մանկապարտեզներ-2, այգի/պուրակ-1, տեխնիկայի ձեռքբերում-1:

-Խոսենք մարզպետարան-կառավարություն, մարզպետարան-համայնքապետարան կապի, ինչպես նաև միջազգային համագործակցությունների մասին:

-Ինչպես նշեցի հարցազրույցի սկզբում՝ աշխատանքում իմ մոտեցումը համագործակցային է, այսինքն, ես կարևորում եմ թիմային աշխատանքը և այդտեղ եմ տեսնում մեծ ծրագրեր իրականացնելիս լավագույն արդյունքի հասնելու ճանապարհը:

Կառավարության և համայնքների հետ մեր աշխատանքն ամենօրյա է, մենք մի մեծ թիմ ենք, որտեղ յուրաքանչյուրս մեր հստակ անելիքն ունենք: Ինչ վերաբերում է միջազգային համագործակցություններին՝ դրանք հիմնականում տնտեսական տիրույթում են՝ կապված ներդրումների, ապրանքների արտահանումների հետ:

-Ինչպիսի՞ ներդրումներ և աշխատատեղեր կան Արագածոտնի մարզում, ո՞րն է տեղի բնակչության հիմնական զբաղմունքը:

-Պետական ծրագրերից զատ, մարզում ակտիվ են մասնավոր ներդրումները, որոնք պակաս կարևորություն չունեն զարգացման, աշխատատեղերի ստեղծման, զբոսաշրջիկների ներգրավման տեսանկյունից: Ուրախ եմ արձանագրել, որ Արագածոտնի մարզում ներդրումային դաշտը գրավիչ է: Սրընթաց զարգացում է ապրում հյուրանոցային բիզնեսը:

Տեղի բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, մասնավորապես, զարգացած ճյուղերն են այգեգործությունը, գինեգործությունը, անասնապահությունը, գյուղմթերքի վերամշակումը: Նշված ուղղություններով ունենք բարձր արտադրական ցուցանիշներ:

Մասնավոր ներդրումների մասով հավելեմ, որ այս պահին մարզում ակտիվորեն շարունակվում է Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրում «Մայլեռ» ընկերության կողմից իրականացվող 30 մլրդ դրամի ծրագիրը՝ լեռնադահուկային համալիրի կառուցումը: Այն արդեն բավականին աշխատատեղեր է ստեղծել և զբոսաշրջիկների մեծ հոսք է ապահովել: Մասնավոր հատվածում մյուս խոշոր զբոսաշրջային ծրագիրը, որով նախատեսվում է Արագածի լանջին լեռնադահուկային հանգստավայր ու ֆերմաներ կառուցել, իրականացվում է «Ռիդ» ընկերության

կողմից, ծրագրի արժեքը 189.6 մլն դոլար է: Ծրագիրը նախապատրաստական փուլում է՝ հողերի ձեռքբերման և փաստաթղթավորման աշխատանքների: Այս ծավալի ծրագրերը, անշուշտ, բավականին խոստումնալից են մեծ աշխատատեղերի ստեղծման ու զբոսաշրջային մեծ հոսքի ապահովման տեսանկյունից:

-Ինչպիսի՞ն են մարզի ղեկավար-բնակիչ փոխհարաբերությունները: Հիմնականում ի՞նչ հարցերով են Ձեզ դիմում:

-Քաղաքացիների հետ իմ կապն անմիջական է և ակտիվ: Թե՛ ամենշաբաթյա ընդունելությունների, թե՛ համայնքային այցերի, և թե՛ այլ ձևաչափով հանդիպումների ընթացքում, ես զրուցում եմ մարզի բնակիչների հետ, ծանոթանում նրանց խնդիրներին և ըստ առաջնահերթությունների լուծումներ տալիս դրանց: Ինձ հաճախ դիմում են սոցիալական, բժշկական աջակցության, աշխատանքի ապահովման հարցերով:

Յուրաքանչյուր ամսվա ավարտին, մենք ամփոփում ենք քաղաքացիների ընդունելությունների, դիմումների արդյունքները: Իսկ տարեվերջին՝ կոնկրետ ցուցանիշները: Եթե խոսենք փաստերով, օրինակ, նախորդ տարի մեր կողմից 871 անձ սոցիալական աջակցություն է ստացել, 127 անձ՝ անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնություն, 100-ից ավելի անձ ապահովվել է աշխատանքով:

-Որպես մարզի ղեկավար, ըստ Ձեզ՝ արդյունավետ կառավարման համար ինչպիսի՞ սկզբունքներ են պետք:

-Կարծում եմ, դա անհատական է՝ կախված մարդու ինտելեկտից, անձնային որակներից, համոզմունքներից և անհատին բնութագրող այլ հատկանիշներից: Հենց այդ անհատական հատկանիշների ամբողջությունն էլ ձևավորում է ղեկավարի, առաջնորդի խարիզման:

Բայց կան ընդհանրական մոտեցումներ, որոնցով առաջնորդվելը ճիշտ ու գրագետ է դարձնում աշխատանքը: Օրինակ, դրանցից են ժողովրդավարությունը, հաշվետվողականությունը, թափանցիկությունը: Սրանք ժամանակակից ղեկավարի աշխատանքի անքակտելի մասերը պետք է լինեն: Կոնկրետ ինձ համար լավ ղեկավարն այն առաջնորդն է, որը կարողանում է հանուն հանրօգուտ գաղափարների իրագործման իր շուրջը համախմբել մեծ ներուժ ունեցող անհատներին՝ ձևավորելով մրցունակ թիմ՝ ապահովելով աշխատանքի գովելի արդյունք:

-Ձեր հաջող գործունեության գրավականն է նաև այն թիմը, որ համախմբված է Ձեր շուրջը: Խոսենք Ձեր թիմի և միասնական աշխատանքի մասին:

-Անշուշտ, ես միշտ ընդգծում եմ թիմային աշխատանքի կարևորությունը: Մասնավորապես, Արագածոտնի մարզպետի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումներն իրենց ներդրումն ունեն մարզի զարգացման գործում: Ես բոլոր պատեհ առիթներին իմ շնորհակալությունն եմ հայտնում և խրախուսում այն մասնագետներին, որոնք իրենց նախանձախնդիր աշխատանքով արժեք են ստեղծում, դրվատելի արդյունք են ապահովում՝ դառնալով մեր արժեքաստեղծ գործունեության կարևոր մասնիկը: Որպես ղեկավար, ես քաջալերում եմ ստեղծարար, կառուցողական, խիզախ ու հավակնոտ գաղափարներ ունեցող աշխատակիցներին:

-Ի՞նչ ծրագրեր եք նախատեսում իրականացնել 2024 թվականին:

-2024-ին մենք շարունակում ենք աշխատել մեծ եռանդով ու մարզը զարգացնելու մոտիվացիայով:Հետաքրքրական է, որ ամեն տարի, նախորդ տարվա ձեռքբերումները մեզ համար ոգեշնչման նոր աղբյուր են դառնում, մեր արձանագրած հաջողությունները մեզ կրկնակի ուժ են հաղորդում ու մղում նոր ձեռքբերումների:

Արձանագրեմ, որ 2024թ. սուբվենցիոն ծրագրերի հայտերի ընդհանուր արժեքը հատում է 12 մլրդ դրամի շեմը, ինչն աննախադեպ թիվ է, և նախորդ տարվա համեմատ ավելի, քան կրկնակի է: Սա նշանակում է, որ մեր կողմից իրականացվող ծրագրերն արդյունավետ են, պահանջված են և տարեցտարի նոր թափ են ստանում:

Աշխատանքային բոլոր ուղղություններով մեր ինտենսիվ գործունեությունը շարունակվում է: Շարունակում ենք մարզում

իրականացնել պետական քաղաքականություն՝ ի շահ և ի բարօրություն ժողովրդի: Մենք վստահ առաջ ենք գնում դեպի մեր տեսլականը, այն է՝ Արագածոտնի մարզը նոր, մրցունակ ու որպես ապրելավայր նախընտրելի, որտեղ քաղաքացին երջանիկ է: Այս տարի ունենք նաև նոր նախաձեռնություններ ու թարմ գաղափարներ, որոնք կյանքի կոչելուց հետո կլուսաբանենք:

-Պարո՛ն Մովսիսյան, առաջնորդի Ձեր կերպարն, իսկապես, պետականամետ է, տարբերվող, ժամանակակից և խարիզմատիկ: Մաղթում ենք, որ աշխատելու Ձեր խանդավառությունը երբեք չմարի:

Շնորհակալ ենք հագեցած ու հետաքրքիր հարցազրույցի համար:

-Ես ևս շնորհակալ եմ Ձեզ՝ Արագածոտնի մարզի, իմ և իմ աշխատակազմի գործունեության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության և լուսաբանման համար:

Բոլորիս արդյունավետ աշխատանքային տարի եմ մաղթում: Աստված պահապան երկրիս ու ժողովրդիս:

Հարցազրույցը՝ Ոսկեհատ Պողոսյանի